

«Նոր հնարավորություններ Mastercard-ի հետ»

ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց համար «Mastercard» վճարահաշվարկային համակարգի քարտերով իրականացվող ակցիայի պայմանները.

1. Ակցիայի նկարագրություն

- 1.1 Ակցիայի անվանումը՝ «Նոր հնարավորություններ Mastercard-ի հետ»
- 1.2 Ակցիայի կազմակերպումը՝ Ակցիան իրականացվում է Mastercard International ընկերության հետ համատեղ:
- 1.3 Ակցիայի ժամկետը՝ 01.02.2022թ.-ից մինչև 31.03.2022թ. ներառյալ,
- 1.4 Ակցիայի մասնակիցներ՝ ակցիայի ընթացքում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Mastercard վճարահաշվարկային համակարգի քարտապան հանդիսացող ֆիզիկական անձ հաճախորդներ (այսուհետ՝ Հաճախորդ(ներ)),
- 1.5 Ակցիայի նպատակը՝ խթանել Բանկի քարտապանների կողմից կատարվող անկանխիկ գործարքների քանակական աճը և շրջանառությունը, միաժամանակ ավելացնել Բանկի կողմից թողարկված Mastercard քարտերի քանակը:

2. Ակցիայի պայմանները և անցկացման ընթացակարգը՝

- 2.1 MasterCard քարտով 10,000 ՀՀ դրամ և ավելի անկանխիկ քանակային ամենաշատ գործարքներ կատարած 15 Քարտապանները կստանան նվերներ:
- 2.2 Ակցիայի ողջ ընթացքում քարտապանի կողմից կատարված ընդհանուր անկանխիկ գործարքների հանրագումարը պետք է գերազանցի 500,000 ՀՀ դրամ:
- 2.3 Հավասար անկանխիկ գործարքների դեպքում առաջնահերթությունը կտրվի գումարային շատ գործարք կատարած քարտապանին:
- 2.4 Միևնույն հաճախորդի տարբեր Mastercard քարտերով կատարված գործարքները չեն գումարվում իրար:
- 2.5 Ակցիայի ընթացքում մեկ հաճախորդը կարող է շահել մեկ անգամ:

2.6 Որպես անկանխիկ գնում չեն դիտարկվի հետևյալ անկանխիկ գործարքները՝ Card2Card /քարտից քարտ փոխանցումները/, դրամական այլ փոխանցումներ, մոլախաղերի հետ կապված գործարքները, կոմունալ վճարումները, էլեկտրոնային դրամապանակներով գործարքները, ֆինանսական հաստատություններում և պետական բյուջե կատարված այլ վճարումները:

2.7 Մեկ անկանխիկ գործարքի նվազագույն գումար՝ 10.000 ՀՀ դրամ:

2.8 Ակցիայի ժամկետում ֆիզիկական անձանց տրամադրվող MASTERCARD վճարահաշվարկային քարտերի տարեկան սպասարկման վճարի համար սահմանվում է 50% զեղչ գործող սակագներից և չնվազող մնացորդը սահմանվում է 0 ՀՀ դրամ, իսկ քարտերի մնացած պայմանները՝ համաձայն Բանկում գործող սակագների: Սույն կետով սահմանված զեղչը չի վերաբերում աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող քարտերին:

3. Մրցանակներ՝

3.1 Ակցիայի ընթացքում MasterCard քարտով 10,000 ՀՀ դրամ և ավելի անկանխիկ քանակային ամենաշատ գործարքներ կատարած 15 /տասնհինգ/ Քարտապանները կստանան՝ Iphone 13 Pro:

4. Ակցիայի արդյունքների ամփոփումը.

4.1 Ակցիայի արդյունքների ամփոփումը և մրցանակակիրների ընտրությունը իրականացվելու է ակցիայի ժամկետի ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում Բանկի Աշխատակազմի, Վճարման և քարտային հետգործառնությունների վարչության, Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի, Մանրածախ բիզնեսի զարգացման դեպարտամենտի և Համալիր բիզնես վերլուծության և մանրածախ հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման վարչություն կողմից:

4.2 Մրցանակների հանձնումը իրականացվելու է ակցիայի ավարտից հետո 2 (երկու) ամսվա ընթացքում Բանկի Աշխատակազմի և Մանրածախ բիզնեսի զարգացման դեպարտամենտի կողմից:

4.3 Բանկի կողմից հայտարարված ակցիայի ամփոփիչ միջոցառման իրականացումը և նվերների հանձնումը կարող է հետաձգվել անորոշ ժամկետով, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության արդյունք և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը կամ խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն: Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության հետևանքով սույն Ակցիայով հայտարարված մրցանակների հանձնման հետաձգման վերաբերյալ Բանկը ողջամիտ ժամկետում հեռախոսակապի կամ Բանկի պաշտոնական ինտերնետ կայքի միջոցով տեղյակ է պահում հաճախորդներին:

- 4.4 Եթե Բանկի կողմից մրցանակի տրամադրման համար սահմանված օրը մրցանակակիրը չի ներկայանում Բանկ, ապա նա կարող է ստանալ մրցանակը նշված օրվանից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում, որից հետո մրցանակակիրը կորցնում է մրցանակի ստացման իրավունքը:
- 4.5 Մրցանակները տրամադրվելու են անձամբ մրցանակակիրներին՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, կամ նրանց լիազորված անձանց՝ օրենքով սահմանված կարգով լիազորագիր և անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:
- 4.6 Մրցանակի ստացման ժամանակ շահող հաճախորդը ստորագրում է նվերի ստացման մասին Բանկի կողմից կազմված ստացական/ակտ:
- 4.7 Նվերի ստացման համար Բանկի աշխատակիցը հաճախորդի կողմից Բանկին տրամադրած հեռախոսահամարով կապ է հաստատում և տեղեկացնում մրցանակների հանձնման մասին: Հեռախոսահամարի սխալ լինելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի հետ կապ չհաստատելու համար:
- 4.8 Այն դեպքում, երբ մրցանակը չի կարող ստացվել հաճախորդի կողմից, կամ հաճախորդը Բանկից անկախ պատճառներով, չի կարող օգտվել մրցանակից, ինչպես նաև հաճախորդի կողմից մրցանակը ստանալու ակտի ստորագրումից հրաժարվելու դեպքում հաճախորդին սերտիֆիկատ չի տրամադրվում, ընդ որում մրցանակը Բանկն իրավունք ունի տնօրինել իր հայեցողությամբ:
- 4.9 Ակցիայի ընթացակարգային անխափանության և արդյունավետ կազմակերպման նպատակով գործելու է Բանկի շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից կազմված հանձնաժողով:
- 4.10 Մրցանակները չեն կարող փոխարինվել դրամական փոխհատուցմամբ, եթե հաճախորդը հրաժարվում է այն ստանալուց:

4.11 Բանկը պատասխանատվություն չի կրում մրցանակի իրացմանը խոչընդոտող գործոնների կամ մրցանակը չօգտագործելու համար:

4.12 Ակցիայի պայմանները չեն գործում Բանկի աշխատակիցների համար: